



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

« 14 » ապրիլի 2022թ.

№ 2/5686-Ա

Հ Ր Ա Մ Ա Ն

ԳԵՂԱՄ ԳԱՍՊԱՐՅԱՆԻ ԵՎ ՀԱՅԿ ՀԱԽՆԱԶԱՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՍԲ
ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով, «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի բ) ենթակետով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 702-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության 17-րդ կետի 6-րդ ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի թիվ 54/2022 եզրակացությունը

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Ծառայողական պարտականությունները ոչ պատշաճ կատարելու համար՝ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկ վճարողների ընթացիկ հսկողության հարկային տեսչություն-վարչության ընթացիկ հսկողության տարածքային թիվ 9 (Արարատի) բաժնի գլխավոր հարկային տեսուչ Գեղամ Վիրաբի Գասպարյանի և հարկային տեսուչ Հայկ Արամայիսի Հախնազարյանի նկատմամբ կիրառել «Նկատողություն» կարգապահական տույժը:

2. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի անձնակազմի կառավարման վարչության պետ Կարինե Գրիգորյանին՝ սույն հրամանն իրագրելու ողջ անձնակազմին:



Recoverable Signature

X

ՌՌԻՍԱՍ ԲԱԴԱՅԱՆ

Signed by: BADASYAN RUSTAM 3701910731

ՌՌԻՍԱՍ ԲԱԴԱՅԱՆ

